


դապետութիւնը և յենուելով ու Ս. Սթանասի աստուածաբանական վարդապետութեան վերայ, Կապադովկիայի հայրերի աստուածաբանութիւնը, նրան կազմող տարրերի և զանազան ազդեցութիւնների կախումով, կրօնական բարոյական աշխարհահայեցողութեան ընդհանուր ոգու մէջ այնպիսի առանձնայատկութիւններ է ներկայացնում, որ նա իրենով ոչ միայն եկեղեցական վարդապետութեան ի յայտ ածելու և հաստատելու յաջորդ շրջանն է ներկայացնում, այլ և ու Ս. Սթանասի հետ համեմատած, Աղէքսանդրիայի դպրոցի հասանքի մէջ մի առանձին ինքնուրոյն՝ այսինքն Կապադովկիայի աստուածաբանութեան կնիքն է կրում: Նրա էական մասը ներկայացնում է այն բարձր գիտական հետաքրքրութիւնը, որ երևան է դալիս քրիստոնէութեան ընդհանուր հատկացողութեան, հին քաղաքակրթութեան հետ նրա ունեցած յարաբերութեան, աստուածաբանական հարցերի լայն և խորը կերպով հրապարակի վերայ դնելու մէջ: Կապադովկիայի հայրերը կարծէք թէ ուղղում են եկեղեցական աստուածաբանութեան գիտական գիծը, հարստացնելով նրան ու Ս. Սթանասի փորձերով և գիտական հետաքրքրութեան հետ կապում են եկեղեցւոյ կրօնական — փորձնական իդէալների անձնութիւնը:

(Շարունակելի)

Արսակ վարդապետ



ԲԱՌԱ ԳԻՒՂԻ ԱՌԵՐՈՒՄԸ

(Շարունակութիւն)

Բազեցոց նպատտ հասցնելու գործն այնքան էլ արագ չէր կատարւում, որովհետեւ այդ ժամանակամիջում երկաթուղիների գործադուլ էր և Մեդրք քահանան իւր նպատաներով հապիւ կարողացաւ 1906 թուի Յունուարի առաջին օրը դուրս գալ Թիֆլիզից Փանձակ յաջորդի մօտ, որը լիազօր էր նպատաները բաժանելու: Վարդապետն սկսեց բաժանել այն բազայիներին, որոնք այդ միջոցին հասել էին Փանձակ: Նպատտ բաժանելու լուրը հրապուրեց քաղցած բազայիներից շատերին գէպի Փանձակ: Բայց նրանցից շատերը դեռ բաժանուած էին հայ գիւղերում, մանաւանդ Փանանց և Խաչկապ գիւղերում:

Մի խումբ Բաղացիներ հարիւրից ստիպուած ճանապարհ
ընկան դէպի Գանձակ և Բրաջուր գիւղը հասնելով ընկերացան
մի քանի սալապանների, որոնք սալներով խոտ էին տանում
Գանձակ ծախելու: Հասնելով Թուփալ Հասանլու թրքարնակ
գիւղը՝ փախստական խումբը նոյնպէս և Բրաջուրցի սալա-
պաններն ենթարկուեցին յարձակման աւաղակարարոյ Թուփալ
Հասանլուեցոց կողմից, որի ժամանակ սպանուեց մի Բրաջուրցի
սալապան, հրդեհուեցին՝ սալով խոտերն ու գերի գնացին իննը
Բաղացի—այն է երեք կին և վեց երեխայ աղջիկ ու աղայ: Բացի
գրանից այդտեղ հրդեհուած սալի խոտի վերայ կիսով չափ
այրուեցին և ապա գնդակահար եղան ու Գանձակում թաղ-
ուեցին Բաղացի Արուշանց այրի Զաւահիրն և որդի Յահաննէսը:

Թուփալ Հասանլու գիւղի աւաղակարարոյ վարմանց և հա-
յերի վերայ յարձակմանց մասին իւր ժամանակ—(1905 վեր-
ջում և 1906 թուի սկզբում)՝ շատ գրուեց Թիֆլիզի հայ լրա-
գրներում և դատ պահանջուեց նրանց դէմ արժանապէս պատ-
ժելու համար:

Ինչևիցէ Թուփալ-Հասանլուեցիք գերիներին տարան Գան-
ձակի Բաղմանլար կոչուած արուարձանը: Գեներալ Նահան-
գապետ գեներալ Ալ'ֆրանի հրամանով, որին խնդրել էին տե-
ղական հայերը, Գանձակ գետի կամրջի վերայ փոխանակեցին
թուրք գերիների հետ: Փոքր յետոյ, նոյն այդ խաղաղասիրու-
թեան միջնորդ կամրջի վերայ փոխանակեցին բանանկեցի Սարգսի
աղջկանը և բաղացի Աւէտ Բաղդոյեանի Բալախանում կնո-
ջը, որին գերել էին թուրքերն Աննենֆելդ գերմանական գա-
ղութում և տարել էին Աւփանլու թուրք գիւղն, որ դրած է,
Կուր գետի աջ ափում, նամբոր գետի միացման տեղը: Բալա-
խանումն իրենէ ջղային հիւանդ էր, օգնութիւն էր օրոնում
միշտ զանազան օւխտատեղիներում և այնքան էլ խելահաս չէր:
Աւփանլում նա արդէն ամուսնացել էր մի թուրքի վերայ:
Երբ Բալախանումին բերին միջնորդ կամրջի վերայ փոխանակե-
լու, նա նոր թուրք ամուսնուն նախադաս համարեց հին հայ
ամուսնուց, դուցէ և վախեցաւ սպանակներէն ու հրաժար-
ուեց փոխանակուելուց: Սրա մասին խօսեցին Թիֆլիզի հայ
լրագրների թղթակիցները: Սակայն Բալախանումը շուտով մե-
ռաւ իւր նոր հայրենիքում:

Գեներալ Ֆլէյշերի նոյեմբերի 29-ին ուղարկած զօրախումբն
աղատեց Զարդախլուն թուրքերի յարձակումներէից: Զարդախ-
լուեցիք սկզբում սիրով ընդունելով Բաղացիներին յետոյ բնա-
կանաբար սկսեցին ձանձրանալ նրանցից) թէև փախստական-
ներն մեծամասնութիւնն ատրիճանաբար արդէն ցրուել էր շըր-
ջակայ հայ գիւղերում մինչև Գանձակ:

Այսպէս Բազացիք բացի Չարդախլուից, Կային Ջաղիր, Բարսում, Գառնակեր, Փիւր, Խաչկապ և Բանանց գիւղերում, ուր տեղական ժողովրդականք շատ կարեկցարար էին վերաբերում և աշխատում էին ամօքել նրանց վիշաք: Այսպէս օրինակ Ջաղիրում նշանաւոր էին Յոհաննէս քահանայ տէր Խաչատրեան, Աբգար Գրիգորեանց, դարբին Խաչատուրի որդի Առուստամ և այլք: Ամբողջ հասարակութեամբ կերակրում էին ոչ միայն իրանց հիւրերին, այլև մօտ լինելով ուղարկում էին բազացւոց համար Չարդախլու ալիւր, հաց, լոբի, կարտոֆ, և այլն: Բարսումում պարագլուխ էին Եփրեմ քահանայ Մելիք Առուստամեանց, Վասիլ բէգ Մելիք Առուստամեանց Սարգիս Աղաջանեանց գիւղական տանուտէր և այլք: Գառնակերում Յովսէփ քահանայ Բալեանց և միւսները: Փիւրում-Յոհաննէս քահանայ Խոջայեանց և Մովսէս քահանայ Մամիկոնեանց, գիւղական տանուտէր Նաւասարդը և միւսները: Այս գիւղում բացի կերակրելուց, ապիւս էին և հագուստ, անկողին ոտնամաններ և այլն: Խաչկապում-Գրիգոր քահանայ Շուղբեանց, Ընանիա քահանայ Շիրակունի, Յոհաննէս քահանայ տէր Ստեփանեանց, տանուտէր Պաւլի-Եպիսկոպոսեանց և այլք: Բանանցում-Պօղոս և Անտօն քահանաները, տանուտէր Ղուկասը, Վաղգէն Տէր Աւետիքեանց, Բարութիւն Ուրուս-Նանեանց և այլք: Գանձակում ձրիապէս տուել էին իրանց տները Կարապետ Ֆաթալեանը, Յովսէփ Քեատիմեանցը, պարոն Շամխարը, ընդհանուր վերահսկիչ էր երեցիօխ Սիմօն բէգ Բաբաքեօսիփան:

Չի կարելի մոռացութեան տալ Արթաշիւ գիւղի առու-դուխարօս երեք եղբայր Խուզակովներին նուէրը թշուառ բազացիներին օգտին: Բացի այն որ երեք հարիւր փութ ցորեն ծախելով 10 տոկոս զիջում արին իւրաքանչիւր փութում, երեք եղբայրները նուիրեցին 200 փութ ցորեն և կարտոֆէլ միասին:

Բազայի փախստականներն իրանց դոյութիւնը պահպանելու համար ջրուած էին զանազան հայ գիւղերում: Արպէս զի որոշ լինի նրանց քանակը, յիշատակում եմ այստեղ այն ցուցակն, որ կազմել է բազացի Մեսրոբ քահանան, երբ նա նպաստներ բաժանելու նպատակով շրջել է գիւղերը և 1906 թուի յունուարին և փետրվարին:

Գիւղերն եւ քաղաքը	գերդասան	արական	իգական	բոլորը
Չարդախլու	47	153	130	283
Ջաղիր	2	5	6	11
Բարսում	15	54	64	118
Գառնակեր	1	4	2	6
Փիւր	2	8	5	13

Խաչակապ	33	109	106	215
Բանանց	61	207	173	380
Գանձակ կայարանում . .	27	73	67	140
Գանձակ (քաղաք) . . .	89	267	231	498
Ընդամենը	277	880	784	1664

Ուրեմն Գանձակի դաւառի հայ գիւղերում պատասպարուած էին 1906 թուի ձմեռը 1664 հոգի Բաղացիներից, որոնց թուում այդ ժամանակ կային կռուի մէջ վիրաւորուած 17 աւական և 8 իգական, բոլորը 25 հոգի 19 դերդաստանից: Ժողովրդի միւս մասն, ինչպէս տեսանք վերևում, գնացել է այլ ուղղութեամբ, դէպի Շամշադինու գիւղերը Ղաղախի դաւառի և նրանց մենք դեռ ևս թողել ենք Քեշիքեանդում և Բագլիդում:

Թ.

Հոսանք դեպի Բագլիգ գիւղը եւ կողոպուտի ենթարկուիլը Կանգ Զուլգադարով բեգերի մօտ: Հայերը մեչիղում. Գրիգոր Բահանայի հետախուզութիւնը. Ոմանց հայերի բնակավայրը Քեիքեանդում:

Փախստական Բաղացիներին մի սառւար մասը սարոսփի տակ իրան ձգեց, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներից, Խաչնի ձորի անտառները: Այդտեղ ահ ու սարոսփից ձայն ծպտուն չէին հանում, որ չմասնուին դաղանար Կալաժող թշնամու որին ու գնդակին: Գլուխը կորցրած չգիտէին որ կողմի վերայ գնան և ուր թաղանուեն: Փողովուրդը վայր ի վերոյ բաժանուել էր պատահական խմբերի: Ահա առաջին խումբերից մինը թէքուեց դէպի հարաւ և մթան մէջ ցրիւ գնում էր: ձանապարհը ժայռոտ էր և անտառապատ, որից վերև լեռան է բարձրանում, ներքև ձորն է խորանում: Հասան այնտեղ, որ կոչւում է Սուլթան-Սաքիւ, Թաքեայ-ղայա թըրքաւանի գիւղի դէմ: Այս գիւղը և նրան կից Քէշ'բաթ գիւղը միասին կոչւում են Սադըխուլ:

Այս գիւղերի ընակիչներից մի խումբ թուրքեր վաղբաջ ընդ առաւօտն ձանապարհ էր ընկել դէպի Բագա՝ թաւանից մասն ու բաժին հանելու իրան: Սրանք չէին սպասում, որ որսն ինքն իրան է որսորդների առաջ դուրս եկել: Բաղացիք նոյնպէս չէին սպասում: Զինուած թուրքերը գիշերը շրջապատեցին փախստական բաղացիներին և սկսեցին անողորմաբար թաւանել, խլում էին հայերից դէնքեր, փամփուշտներ, հագուստեղէն, օսնամաններ, դրամ, մի խօսքով ամէն բան, ինչ որ ընկնում էր նրանց ձեռքը:

Հայ խմբի մէջն էր և Բաղայի կառավարութեան գիւղական դպրոցի աւագ-ուսուցիչ՝ Գանձակի Մկրտիչ քահանայի որդի երիտասարդ Գագիկ Տէր Աստուածատրեանը: Աս տանում էր ձեռքին իւր բարձր և պաշտօնական զգեստը (մունդիրը): Ի դուր էր հաւատացնում Գագիկը, որ ինքը ուսուցիչ է և այդ կոչման մէջն էր որոնում իւր իրեղէնների պաշտպանութիւնը: «Մի և նոյն է, հայ եռ» բացատրեցին թուրքերը և խլեցին Գագիկից մինչև անդամ հագի կօշիկները և թողին նրան բոքիկ-իսկոյն մինը հագաւ և կօշիկները և համազգեստը:

Անտօն Տէր Վարդանեանը կողոպտողից խնդրեց նրա հին տրեխները, հագաւ ինքը և իւր չուստերը հագցրեց ուսուցիչ Գագիկին:

Այս կողոպուտի ժամանակ ահաբեկ ժողովրդի սարսափը այնքան խիտ էր, որ նրանցից չատերը իրանց ձգեցին ձորի, անտառի և քարերի մէջ և անհետացան մինչև հետևեալ օրը: Անձնական վրէժ ունենալով խաշատուր Մարգարեանցի հետ՝ վերջինիս բռնեցին թուրքերը այդ տարաբաղդ միջոցին և կամենում էին սպանել նրան. Բայց մի քանի հայերի խնդրանք և դիմաւորապէս իւր Մարգարեանցի թագոտեամբ խաւար անտառի մէջ՝ սպանութիւնը տեղի չունեցաւ: Սակայն այս միջնադէպի ազդեցութիւնից՝ Մարգարեանցի զօրանչ Թագուհի եղեանցը յանկարծակի անդամալոյծ եղաւ հէնց այդտեղ և այլ ևս չկարողացաւ շարժուել, որ և յետոյ մեռաւ Բերդ գիւղում | Շամշադինու. | Կողոպտելուց յետոյ թուրքերը թոյլ տուին հայերին շարունակելու իրանց ճանապարհը:

Հայկական խումբը սարսափի ազդեցութիւնից չէր կարողանում հանգստանալ, երբ մտածում էր, որ մինչև Շամշադինու հայկական Ղուլալի առաջին գիւղը հասնելը պէտքէ անցնէր թուրք գիւղերի մօտով և ուրեմն ո՞վ գիտէ թէ ի՞նչ փորձանքների պէտք է ենթարկուէր: Առտի մտածեցին դիմել Զիւլգադարով բէգերի, օգնութեան, որոնք բնակւում էին 3-4 վերստ հեռաւորութեամբ, հէնց ճանապարհի վերայ: Վճռեցին մարդ ուղարկել բէգերի մօտ և կանխօրէն աղերսել նրանց հաճութիւնը: Մարդը գտնուեց: Խմբի մէջն էր Աղասոնց Մարտիրոսը, որ բուռ լինելով՝ մօտ ծանօթ էր Զիւլգադարով բէգերի հետ: Աս մի քանիսնների հետ յառաջ խաղաց մթութեան մէջ և հասաւ Բագլի գ. գիւղը ուղղակի Աղլի բէգ Զիւլգադարովի մօտ:

Բագլի գ. կոչուածը մի փոքրիկ գիւղ է Զագամ գետի վերայ, հինաւուրց կամրջի մօտ, Բաղայից դէպի հարաւ, 4-5 վերստ հեռաւորութեամբ: Խըննալու գիւղի մի մասը լինելով՝ կոչւում է Բագլի կ, ըստ որում նրան հիմնել են իրանց բնակութեան

համար Զիւլգադարով բէգերը և շրջապատել են դիւղը մի հասարակաց պարոպով, որի երկու կողմի լայն պարսպադռները փակուած են դիշերները:

Նշանաւոր կալուածատէր եղբարք Զիւլգադարով բէգերը, Մեհրալի բէգ, Համիդ բէգ և Ադիլ բէգ իրանց ոչ սահաւաթիւ գերդաստաններով մշտապէս բնակուած են այդ Բադլի դում: Ալլահեար բէգ Զիւլգադարով՝ թէև յիշեալների մեծ եղբայրը, բայց նա բնակութիւն է հաստատել սահաւ ինչ հեռու Քէշի շքեան դ կոչուած հայկական աւերակների վերայ:

Վերջապէս՝ նոյեմբերի 24, հինգշաբթի առաւօտեան հաւաքանշին բրուտ Մարտիրոսը ներկայացաւ Ադիլ բէգին, յայտնեց փախստական հայերի դրութիւնն ու դալուստը, որի համար Արդիւլ-Բէգը հաճութիւն յայտնեց և հրամայեց իւր ծառաներին տեղաւորացնել հայերին առժամանակ գոմում: Հայերը լռիկ մնչիկ մօտեցան Բադլիդին, ուր թուրք դիշերապահները տեղեկութիւն չունենալով՝ բարձր հարցրին՝ թէ ո՞րք են մօտեցողները և պատասխան չստանալով մի հրացան թնդացրին օդի մէջ. բայց պատուէր ստանալով Ադիլ բէգից՝ լռեցին: Իսկ հայերի լռութիւն պահելը դիտաւորեալ էր, որպէս զի վտանգաւոր հայ լինելը չյայտնուի:

Առաւօտեան լուսաբացին Ադիլ բէգը թաշկինակը աչքին, նայեց հեռուից թշուառ հայերի վերայ և ապա ամէն տեսակ վտանգից ապահով պահելու նպատակով, հրամայեց տանել հայերին մէչիդի ներսը:

Այս առաջին փախստական խումբն էր, որ այս ուղղութեամբ հասաւ Բադլիդ:

Հայերին մէչիդ հրաւիրելու նպատակն էր, ինչպէս բացատրեցին հիւրասիրողները ապահով պահել հայերին այն վրիժառութիւնից, որով համախուած են Բադալյում սպանուած թուրքերի ազգականները:

Ծանօթ թուրքերը ոկսեցին այցելել հայերին մէչիդում՝ բերելով նրանց համար հաց, պանիր, միս և այլն: Աւտելիք ուղարկեց և Ադիլ բէգը: Սահայն մարդասիրական վերաբերմունքը նսեմանում էր մի այլ տեսակի այցելութեամբ: Հէնց առաւօտուանից ոկսեցին յաճախել դանադան ծանօթ և անծանօթ թուրքեր և մօլլաներ, որոնք առաջարկում էին փախստական հայերին ընդունել մահմետականութիւն, քարոզելով որ հայութիւնն արդէն վերջացել է, այլ ևս ոչ մի հայ չէ մնալու երկրի երեսին, առաջարկում էին սափրիչ բերել: Քարոզիչները ամբողջ օրը դնում դալիս էին և կրկնում էին նոյն քարոզը:

Չէին երևում մէչիդում միայն Զիւլգադարով բէգերը:

Հայերը խորին լուսթեամբ էին տանում քարոզները . . .

Անցաւ առաջին օրը, երեկոյեան դէմ հայերին դուրս բերին մէշիգից և բաժանեցին երկու մասի, մեծ մասը տարան դիշերեկու Ադիլ բէգի բնակարանի ներքին յարկը, փոքր մասը նորից էլի գոմը: Բոլորը միասին մօտ 200 հայ էին: Երեկոյեան սաջի վերայ թխած հաց բաժանեցին ինչպէս Ադիլ բէգի կողմից, նոյնպէս և ծանօթ թուրքերի կողմից:

Ադիլ բէգի ծառաները զղուացնում էին վախտաւաններին պահանջելով նրանցից վառօդ, փամփուշտ և այլ իրեղէններ և մահով էին սպառնում՝ եթէ մինը կամ միւսը յայտնէր բէգին: Այնու ամենայնիւ բըռւա Մարաիբոսը յայտնեց Ադիլ բէգին, որը խիստ յանդիմանեց ծառաներին, մանաւանդ երբ իմացաւ բէգը, որ Խաչատուր Եղեանցին մի թուրք պնդելիս է եղել, որ իւր ձեռքի մատը կտրի և մատանին հանի ու տայ թուրքին:

Հետևեալ օրը, ուրբաթ, նոյեմբերի 25 հետզհետէ եկան նոր խմբեր և դիմեցին Մեհրալի և Համիդ բէգերի կարեկցու թեանը: Սակայն պէտքէ նկատել, որ այս նոր խմբերը, որոնց մէջն էին և Բագայի երկու քահանայք՝ Տէր Ներսէս և Տէր Գրիգոր, նախ քան Բագլիգ հասնելը, նոյնպէս միւս խմբերի նման, մնացել էին շիւարած Խաչնի ձորում. թէ ո՛ւր գնան և ո՛ւմ դիմեն: Վերջին յոյսները զնեւով կրկին Զիւլփադարով բէգերի վերայ, որանք էլ, առաջին խմբի նման, դեսպան ուղարկեցին բէգերի մօտ: Ահի երկիւղով վստահութիւն յայտնեցին գնալ վտանգաւոր գիշերային ճանապարհ Ղահրաման Դաթոյեանց, Յարութիւն Դանիէլեանց, և երկու ուրիշները: Սրանք որոշեցին դիմել էլի Զիւլփադարով բէգերին, զլխաւորապէս Համիդ բէգին, որ թէև մի անուս, կոշտ ու կոպիտ մարդ է, այնու ամենայնիւ վախտաւան մի խումբ հայերի կարծիքով նա աղնիւ էր և վստահելի: Դեսպանները գնացին և չվերադարձան ամբողջ ցերեկ: Խաչնի ձորում ահ ու դողով սպասող 700 հոգի հայ ժողովրդի տարտամ զրութիւնը անտանելի էր: Վերջապէս, դեսպանները, բացի Դաթոյեանից, որ մնացել Բագլիգում, ուշ երեկոյեան վերադարձան Խաչնի ձորը՝ բերելով իրանց հետ Համիդ բէգի տուած երկու թուրք ու ղեցոյցներ:

Կանայք և երեխայք տեսնելով այդ անծանօթ զինուած և ձիաւորուած թուրք ու ղեցոյցներին, լաց ու կոծ բարձրացրին անտառի մէջ, կարծելով թէ սպանելու համար են եկել: Ուղեցոյց թուրքերից մինը առաջից, միւսը ամբոխի յետևից, կամաց կամաց շարժուեցին գիշերուայ մթութեան մէջ դէպի Բագլիգ: Ժողովուրդը խռնուած տարածուել էր մի վերստի

վերայ և որոշ չէր՝ թէ ո՞վ մեծ հետ է դնում, իւրաքանչիւրը մտածում էր լոկ իւր վերայ: Դրացի թուրքերի անից, բէգերի հողմից կարգադրուած էր, որ ժողովրդի հոսանքը կատարուէ գիշեր ժամանակ, ուղեցոյցներն էլ իրանց հողմից խորհուրդ էին տալիս յառաջ դնալ լուռ ու մունջ: Եօթ հարիւր հոգի լռիկ ու մնջիկ...

Եւ այդ սոսկալի լռութեան մէջ, խմբի յետև, ճանապարհի մթութեան մէջ, լուռեց մի ծծկեր մանկան լացի ձայն: Դա դէն ձգած մանուկ էր, որ իւր լացով կարող էր վտանգի ենթարկել փախստականներին, ուստի թուրք ուղեցոյցը խորհուրդ տուեց վերցնել այդ մանկան: Հապա ո՞վ վերցնի, ամենքն էլ ունէին իրանց ուսերի վերայ մի մի ունիական մեծ կամ փոքր երեխայ: Այնու ամենայնիւ մի տղամարդ, թէև ունէր ուսին իւր ունիական երեխան, վերցրեց այդ թշուառ մի տարեկան արու մանկան և 2-3 ժամ տանելով ու չգտնելով նրա ծնողներին, նորից դէն ձգեց տարաբաղդ մանկանը: Մի կին իւր կիսամեայ աղջիկ մանկան ձայնը կտրելու համար՝ գետնի վերայ պարկեցրեց մանկանը, երեսը դէպի գետին և մի քար վրան դնելով, թողեց ու շարունակեց իւր ճանապարհը...

Երկու վերստաչափ տարածութիւն էր մնացել, որ հասնէին Բագլիգ և ահա դուրս եկան բաղմութեան առաջ 4 զինուած ձիաւոր թուրք, բոլորովին անծանօթ, և հաւերի երամի տեղ ընդունելով այդ խառնաշփոթ բաղմութիւնը, սկսեցին հողապտել, խլեցին հրացաններ, փամփուշտներ և այլ տեսակ դէնքեր: Եօթը հարիւր մարդ հնազանդութեամբ անձնատուր եղան այդ 4 աւազակին: Սարսափի աղդեցութիւնից հայերը ապուշ էին կտրել և կորցրել էին ինքնաճանաչութեան զգացմունքը:

Վերջապէս նիհարած, դալիացած հայերը հետզհետէ հասան Բագլիգ: Զիւլգադարով Մեհրալի և Համիդ բէգերը ընդունեցին հայերին թաշկինակները իրանց աչքերին քսելով: Տեղաւորներին դոմբրում, մարագներում և այլ տեսակ շինութիւններում: Իսկ Ներսէս և Գրիգոր քահանաներին, Ղահրաման Դաթոյեանցին, Ղահրաման Տէր Աբրահամեանցին Սարգիս Գրիգորեանին, այլ և ուսուցիչ Գադիկ Տէր Աստուածատուրեանցին Մեհրալի բէգը տեղաւորներեց իւր եղբոր—Համի բէգի բնակարանում, սեղանակից անելով նրանց:

Հետևեալ օրը շաբաթ, նոյեմբ. 26 Մեհրալի բէգի և միւս բէգերի հրամանով մորթուեց մի երկու կով, որով կերակրեցին բոլոր փախստական հայերին: Համիդ բէգը յանձնարարեց Ներսէս քահանային ցուցակագրել բոլոր հայերին, իբրև այն նպա-

տակով, որ իմանար թէ քանի հայեր են դիմել իւր օգնութեան: Տուցակով դուրս եկաւ մօտ 800 հոգի:

Առանց յանձնարարութեան չմնաց և Գրիգոր քահանան: Մեհրաբի բէգը սրան և Ղազար Աթոյեանցին ձի նստացնելով, երկու հաւատարիմ թուրքի ընկերակցութեամբ ուղարկեց Խաղնի ձորը՝ որոնելու, գտնելու և բերելու կորած, յետ մնացած, մոլորուած հայերին: Ինքն էլ դնաց նրանց յետևից, բայց չիջաւ ձորը: Միւս կողմից էլ հրաւիրեց նոյն տեղը և Ալլահեար բէգին՝ իւր աւագ եղբօրը:

Տէր Գրիգոր Տէր Աբրահամեանցը իջաւ ձորը, ձայն տուաւ այս և այն կողմի վերայ՝ անտառի մէջ որ դուրս գան նրա մօտ թաղնուած հայերը և այդ միջոցին ընդառաջ գուրս եկան մի քանի թուրքեր, որոնք եկել էին որոնելու և գտնելու այդ ձորում սպանուած և թողած իրանց ազգակիւր Զիադխան բէգի մարմինը, որի մասին խօսք եղաւ նախընթաց գլուխներից մէկում: Որոնոք թուրքերը հայերի ասից չէին վտահանում իջնել ձորի խորքերը, ուստի բռնեցին Տէր Գրիգորին և մահուան սպառնալիքով պահանջեցին գնալ իրանց հետ և գտնել դիակը: Հնազանդուէց քահանան: Շատ որոնելուց յետոյ յաջողուէց գտնել: Զիադխան բէգի դիակը տեսնելուն պէս՝ նրա ազգակիցները վրէժխնդրութեան ցատումով լցուած՝ սրերը հանած կամեցան կտոր կտոր անել քահանային բաղացիներն փոխարէն: Բայց քահանայի աղերսանքով և թուրքերից մէկի միջնորդութեամբ հազիւ յաջողուէց կեանք շնորհուել քահանային: Թուրքերի ստիպմամբ քահանան իւր ուսերի վերայ դուրս բերաւ Զիադխանի դիակը ձորից դաշտ . . . և ապա որոնելով գտաւ ձորում 7 հոգի կիսակենդան կանայք և երեխայք և սրանց թուում գտաւ մի ամառկան դէն ձգած երեխայ, որ յետոյ յանձնուէց իւր ծնողացը և որ 1907 թուի սկզբին երկու տարեկան տղայ էր դարձել:


Գրիգոր քահանան իւր գտած կանանց և երեխանց դուրս բերեց այն վայրը, ուր սպասում էին Ալլահեար և Մեհրաբի բէգերը: Մինչև այդ տեղ հասնելը քահանան դտաւ և մի տեղ ժողովեց ձորում և շատ մանուկ հայերի դիակներ. ձանապարհին նա հանդիպեց շատ կանանց և աղջկանց, որոնց թագստեան տեղից գտնելով գերի էին վարում թուրքերը: Ալլահեար բէգի միջամտութեամբ քահանան աղատեց դերութիւնից այդ կանանց և աղջկանց և մինչև 18 հոգի տարաւ, Ալլահեար բէգի կարգադրութեամբ, Քէշիշքեանդ դիւղը, ուր այդ բէգի մշտական ընակութիւնն է: Քահանան ստիպուած մնաց Քէշիշքեանդում այլ ևս երկար ամիսներ և չէր կարողանում վերադառ-

նալ իւր գերդաստանի մօտ, որ ստիպուեց, առանցք քահանայի, Բագրիգից գնալ փախստականների հետ դեգերելու օտարութեան և մուրացկանութեան մէջ Շամշադինու և Ղաղախի հաց գիւղերում . . .

Թափառական բաղացիներն համար այսպիսով ստեղծուեց և մի նոր ժամանակաւոր ընակավայր՝ Քեշիշքեանդ գիւղում՝ Ալահեար բէգի տնօրէնութեան ներքոյ։ Այս պատահական բան չէր, այլ նպատակաւոր։ Այդ ընակավայրը ստեղծեց ինքը Ալահեար բէգ Զիւլֆաղարովը մի կողմից՝ հայերին պատսպարելով թուրքերի յարձակումներից և միւս կողմից՝ իւր անձնական ապահովութեան համար, ըստ որում Ձարդախլու պիւղի հայերը Քաղայի աւերման վրէժը առնելու համար սպառնում էին յարձակուել և աւերել Քեշիշքեանդը՝ հասցնելով նրա ընկելներին բաղացիներն ներկայ վիճակին . . .

Կր Շարունակուի

Քաջբերունի.



Ի Մ Վ Ի Ճ Ա Կ Ը

Երկինքն ամպել է. թանձր, ահարկու

Մշուշը ծածկել իմ անձուկ ճամբան։

Բախտի անողոք անիւք հսկիւ

Դարձրել չորս կողմս ամայի խոպան։

Նայում եմ երկար, որ գտնեմ ճամբաս,

Հասնեմ փափագած ցանկալի կէտին.

Ֆասկոտ մրրիկն է ծիծաղում վրաս

Եւ ինձ ուշաթափ, շպրտում գետնին։

Ներսէս ՌԵՏՈՒՆԻ

